

PEARLS OF ARMENIAN HERITAGE

Յովհաննէս Օձնեցի (շուրջ 650 – 729)

Հայ Եկեղեցւոյ զարգացած եւ մեծ հայրապետներուն կարգին կը պատկանի Յովհաննէս Օձնեցի Կաթողիկոսը: Ծնած է Տաշիրք գաւառի Օձուն գիւղը, հաւանաբար 650ի ատենները: Նախնական դաստիարակութիւնը ստանալէն յետոյ, ուսումները շարունակած է Արագածոտնի Սուրբ Աստուածածին Վանքի հոշակաւոր վարդապետարանին մէջ, աշակերտելով Թէդորոս Քոթենաւոր Վարդապետին, որուն համար կ'ըսէ թէ “վեհագոյն վարժապետ էր, հայր եւ հոգեւոր վարժութիւններու հրահանգիչ:” Կը հմտանայ Սուրբ Գրիքի մեկնութեան, իմաստասիրական եւ հռետորական գիտութիւններուն մէջ:

Կաթողիկոս կ'ընտրուի 718ին եւ անմիջապէս ժողով կը գումարէ Դուինի մէջ, եկեղեցական բարեկարգութեան համար: Վարչական խորագէտ հեռատեսութեամբ՝ հայրապետանոցին համար պատրաստել կու տայ եկեղեցական ժողովներու եւ կանոնադրութեան հաւաքածոն, որ իր բարերար ազդեցութիւնը շարունակած է դարերու ընթացքին, ամրապնդելով Հայ Եկեղեցւոյ վարչական աւանդութիւնը:

726ին կը գումարէ Մանազկերտի ժողովը, հայ եւ ասորի եկեղեցիներու միջեւ ծագած խնդիրներուն քննութեան համար: Տասնեմէկ տարիներ կը հովուէ Հայոց Եկեղեցին մեր պատմութեան դժուարագոյն շրջաններէն՝ արաբական տիրապետութեան եւ մահմետական օրէնքին հաստատման օրերուն: Աւանդութիւնը կը յիշէ Օձնեցի հայրապետը ըսելով որ տեսքով փառապանծ էր եւ շքեղ կերպով զգեստաւորուած, բայց վարքով ճգնասուն էր եւ մարմնին վրայ քուրձ կը հագնէր:

Իրմէ մեզի հասած են երեք գլխաւոր ճառեր, կանոնագիրքին հաւաքածոն, եւ եկեղեցական ժամակարգութեան մեծայարգ մանրուամունքը, որով կը նկարագրէ ժամերգութիւններուն կարգն ու սարքը՝ այնպէս ինչպէս կը կատարուէին իր ժամանակ, համառօտ բացատրութիւններ տալով:

Առաջին ճառն է *Ինքնակենսագրական* մը, զոր գուցէ խօսած է որպէս ատենաբանութիւն իր կաթողիկոսական ընտրութեան առիթով: Համառօտ կերպով իր մասին անդրադառնալէ ետք, կը ներլայացնէ հայ եկեղեցւոյ մէջ սարդած զանազան անկարգութիւնները եւ կանոններ կը սահմանէ ուղղելու համար զանոնք: Երկրորդ ճառն է *Ընդդէմ Երեսութեանաց* որ իր լաւագոյն գործն է, հանդէս գալով կորովի պատճառաբանութեամբ եւ հզօր ճարտարախօսութեամբ, ապացոյց տալով աստուածաբանական լի գիտութեան եւ իմաստասիրական խոր ծանօթութեան: Իր փաստերը կը բերէ հայ եկեղեցւոյ ծանօթ հայրապետներու վկայութիւններէն (Գրիգոր Լուսաւորչի, Աթանասի, Բարսեղի, Նազիանզացիի, եւ Կիրեղի) ցոյց տալով հայ եկեղեցիին միաբանութիւնը ընդհանուր եկեղեցիին հետ՝ Քրիստոսի մէջ երկու բնութիւններ ընդունած եւ պաշտպանած ատեն: Երրորդ ճառն է *Ընդդէմ Պաղիկեանց* համառօտ գրութիւնը, որ սակայն չունի Երեսութեաններուն դէմ գրած ճառին վեհութիւնն ու կատարելութիւնը:

(Քաղուած Հ. Կիրեղ Վրդ. Քիպարեանի “Պատմութիւն Հայ Գրականութեան” հատորէն)

